



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ**

No 6424/2

«10» 09 2019

**«ԻՆՉՊԵՍ Է ԾՆՎՈՒՄ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԸ: 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ  
ՍԿՋՔԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ  
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով իրականացվող մշակութային դրամաշնորհային ծրագրերի «Թանգարանային և գրադարանային ոլորտների նախագծեր և միջոցառումներ» անվանակարգի մրցութային հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 17-ի որոշման 1-ին հավելվածի 10-րդ կետի՝ «Ինչպես է ծնվում գլուխգործոցը: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ռուսական ակունքները» խորագրով ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել «Ինչպես է ծնվում գլուխգործոցը: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ռուսական ակունքները» խորագրով ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1075. Մշակութային ժառանգության ծրագրի» «11004. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» միջոցառման համար (տող՝ «Աջակցություն նոր ցուցադրությունների և ցուցահանդեսների կազմակերպմանը, հրատարակումներին, միջոցառումների իրականացմանը») Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված գումարներից հատկացնել 6000.0 հազար (վեց միլիոն) դրամ՝ «Ինչպես է ծնվում

գլխագործոցը: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ռուսական ակունքները» խորագրով ծրագրի իրականացման հետ կապված մասնակի ծախսերի ապահովման համար:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարին՝ սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը հատկացնելու համար, հրամանի ուժի մեջ մտնելու պահից 15-օրյա ժամկետում հաստատել ծախսերի նախահաշիվը և կնքել պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) «Ռուսական արվեստի թանգարան /պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու/» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ:

4. Նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետին՝

ա. հսկողություն իրականացնել պայմանագրի, պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման և բովանդակային հաշվետվության ներկայացման ժամկետի կատարման նկատմամբ.

բ. պայմանագրով նախատեսված բովանդակային հաշվետվությունն ստանալուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, դրա վերաբերյալ եզրակացությունը տրամադրել ֆինանսաբյուջետային վարչությանը.


գ. մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը ներկայացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրության նախագիծը և բովանդակային հաշվետվությունը.

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ն. Խաչատուրյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10.09.2019

X 

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

## ԾՐԱԳԻՐ

«Ինչպես է ծնվում գլուխգործոցը: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ռուսական ակունքները» խորագրով

### Ծրագրի բովանդակությունը

«Համագործակցության ժառանգությունը: Ավանդույթներ ապագայի համար» նախագիծը երկարամյա միջպետական, միջմշակութային համալիր ծրագիր է, որը միտված է զարգացնելու միջմշակութային համագործակցությունը ԱՊՀ երկրների միջև: Ծրագիրը մեկնարկել է 2014 թվականից, որի նախաձեռնողը և հեղինակը «Համառուսաստանյան դեկորատիվ-կիրառական և ժողովրդական արվեստի թանգարանն» է:

Ըստ ծրագրի հայեցակարգի՝ յուրաքանչյուր տարի փոխվում է գործընկեր երկիրը, որն ընդունում է մեծածավալ գեղարվեստական ցուցահանդես և գիտաժողով ԱՊՀ երկրների առաջատար մասնագետների մասնակցությամբ:

2019 թվականին հյուրընկալող երկիր է ընտրվել ՀՀ-ը՝ Ռուսական արվեստի թանգարանը (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու): Ծրագրի շրջանակում Ռուսական արվեստի թանգարանն իր տարածքում կկազմակերպի «Ինչպես է ծնվում գլուխգործոցը: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ռուսական արվեստի ակունքներ» խորագրով ցուցահանդես: Ցուցադրությունը սկսվում է տիեզերական, հոգևոր և մարդկության պատմամշակութային ակունքները ներկայացնող նյութերով: Այնուհետև ներկայացվում է ժողովուրդների պատմական ընթացքը՝ անդրադառնալով Արևմուտք-Արևելք հարաբերությունների պատմագեղարվեստական դրսևորումներին, ժողովրդական, ազգային և հոգևոր առանձնահատկություններին, որոնք մեկնա-բանվում են որպես համամարդկային, մարդասիրական հավերժական արժեքներ:

Ցուցահանդեսի հայեցակարգային նման մոտեցումը, ցուցադրության ձևավորման միջոցով տարբեր թանգարանային հավաքածուների մեկ համատեքստում ներկայացնելն ինքնին նորարարություն է թե Ռուսական արվեստի թանգարանի պատմության և գործունեության մեջ, թե ՀՀ արդի թանգարանային մշակույթում:

## **Ծրագիրն իրականացնող կազմակերպության անվանումը**

«Ռուսական արվեստի թանգարան /պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու» ՊՈԱԿ

### **1. Ծրագրի իրականացման վայրը**

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

### **2. Ծրագրի նպատակը**

Առաջարկվող ծրագրի նպատակն է ԱՊՀ երկրների միջև պատմական կապի ամրապնդումը, մշակութային ժառանգության արդիականացումը:

Ծրագրի շրջանակներում Ռուսական արվեստի թանգարանը առաջին անգամ հնարավորություն կունենա համագործակցել մասնագիտական մեծ փորձ և հեղինակություն ունեցող Ռուսաստանի դաշնության պետական թանգարանի հետ: Տուցահանդեսի նպատակն է Ռուսական արվեստի թանգարանի հավաքածուն նորովի մեկնաբանել և ներկայացնել համառուսաստանյան թանգարանի ֆոնդերից բերված ժողովրդական և դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներով՝ հաշվի առնելով լայն հանրության հետաքրքրությունները, տարիքային առանձնահատկությունները, գիտական և մասնագիտական նախասիրությունները:

### **3. Ծրագրի ակնկալվող արդյունքները**

Ծրագրի իրականացման արդյունքում թանգարանը կունենա արդի թանգարանային պահանջներին համապատասխան ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով ցուցադրական տարածք՝ թե՛ ժամանակավոր և թե՛ մշտական ցուցադրության համար: Միաժամանակ ցուցահանդեսը և ցուցադրական նորարարությունները կխթանեն թանգարանի այցելությունները թե՛ տեղի և թե՛ զբոսաշրջիկների շրջանում: Տուցահանդեսի միջոցով թանգարանը կդառնա միջմշակութային համագործակցության տարածք:

### **4. Ծրագրի իրականացման ժամկետները**

2019 թվականի հոկտեմբերի 28-ից 2020 թվականի ապրիլի 26

### **5. Ծրագիր շահառուները և ոչ ֆինանսական ցուցանիշները**

